# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 30.03.2023թ. ԿՆՔՎԱԾ N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/03» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» օգոստոսի 2023թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Կարեն Գիվարգիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով 30.03.2023թ. Կողմերի միջև կնքված N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/03» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 կետով, և հիմք ընդունելով Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման N Ն/25/6036-2023 գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի հավելված 1.1-ում՝ անվանացանկում, «Շարժիչ» բաժնում 42-րդ անվանատողը «Շարժիչի բարձր ճնշման մղիչի փոխարինում» լրացնել «հանում և տեղադրում» բառերով, ինչպես նաև 61-րդ անվանատողից հետո ավելացնել «Շարժիչի բարձր ճնշման մղիչի վերանորոգում՝ ներառյալ բոլոր աշխատանքները» 77/1 անվանատող, ընդհանուր գումարը սահմանելով 150 000 ՀՀ դրամ, ինչպես նաև ավելացնել «Շարժիչի այրիչների (ֆարսունկա) հանում տեղադրում, փոխարինում կամ մաքրում» 77/2 անվանատողը, մեկ հատի ընդհանուր գումարը սահմանելով 10 000 ՀՀ դրամ:

### 2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը թողնել անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ | «Գարանտսերվիս» ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1 | Ք.Երևան, Թբիլիսյան խճ.20 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ | «Կոնվերսբանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 1150001172630300 | ՀՀ193004674290 |
| ՀՎՀՀ 01522459 | ՀՎՀՀ 00840437 |
| Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար | Տնօրեն |
| ________ Կ. Հովհաննիսյան | ________ Կ. Գիվարգիզյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |